ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ *)

I

Մարքսի կեանքը, սոցիալ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը եւ գրական վաստակները։

> Segui il tuo corso e lascia dir le genti!
> *Հետևիր ճանապարհիդ, և թող մարդիկ խօսեն, ինչ ուզում են։*
>
> Դանտէ:

10.

Ֆերդինանդ Լասալի գործունէութիւնը։—Մարքսը և Լասալը։—Համեմատական գծեր Մարքսի և Լասալի մասին, իբրև գիտնական դէմքեր։—Նմանութիւններ և տարբերութիւններ։—Նրանց գրական սիմպատիաները։—Մարքսի մատերիալիզմն ու Լասալի իդէալիզմը։

—

Թէև Գերմանիայի բանուորութիւնն ու դեմօկրատիան իսպառ զրկուեց իր կոմունիստական և յեղափոխական լաւագոյն ույժերի—Մարքս-Էնգելսի—ներկայութիւնից և կենդանի աջակցութիւնից, այնուամենայնիւ Գերմանիայում անտարբերութեան չմատնուեց կոմունիստական պրոպագանդն ու շարժումը։ Մի վառվռուն, մինչև ոսկորների ծուծը յեղափոխական երիտասարդ, մի հանճարեղ հռետոր ու ագիտատոր շարունակեց մեծ կոմունիստների գործը։ Դա Ֆերդինանդ Լասալն էր՝ արևմտեան և միջին Գերմանիայի բանուորական շարժման այնքան հռչակաւոր պարագլուխը 50-60-ական թուականներին։ Լասալի տունը (Դիւսելդորֆում) եղել է մշտական ապաստարանը բոլոր հալածուողների և քաղաքական յանցաւորների համար։ Լասալի նամակները, ուղղած Մարքսին, պարզ

*) Տես «Մուրճ» № 1, 2 և 3.

ցույց են տալիս, թէ ինչպիսի անդուլ ջանքերով ու անվհատ յոյսերով է նա ժամանակել բանուորական շարժման ու կոմունիստական պրոպագանդին այն ժամանակ, երբ թեաւորուած ռէակցիան անպարտելի արշաւանքներով ճնշում, հալածում ու կործանում էր ամեն բան, ինչ յեղափոխական ու կոմունիստական էր։ Հակառակ ոստիկանական հետապնդումներին, Լասալը կենդանի յարաբերութեան մէջ էր Հռենոսի բանուորների հետ, կարդում էր նրանց ժողովներում դասախօսութիւններ, օժանդակում նրանց դրամով և այլն։

«Ա՜խ, դուք չէք պանդուխտը»,—գրում էր Լասալը Մարքսին 1857 թ. 26-ին ապրիլի,—«այլ ես։ Որովհետև կոուող հին ընկերների և հաժախոհների խումբ էք ներկայացնում դուք ժողովուած միևնոյն քաղաքում։ Իսկ ես տարիներ շարունակ ապրում եմ՝ բոլորովին միայնակ, առանձնացած հին զինակիր եղբայրներից։ Իսկապէս շատ ծանր է այս դրութիւնը։ Բացի բանուոր դասակարգից, որ իր սիրտն ու միտքը պահպանել է այնքան առողջ ու թարմ դրութեան մէջ և շարունակ զարգացնում է իրան, մնացած խաւերի՝ այսպէս անուանուած կրթուած մարդկանց մէջ, տիրում է նոյն ատելութիւնը, երկիւղն ու կղզիացման ոգին, ինչպէս առաջ...»։ 39)

Այստեղ առանձնապէս ծանրանալ Լասալի գործունէութեան վրայ, չի ներում, իհարկէ, մեր նիւթի ծաւալը։ Այնքան, որքան մենք մարքզիսմի մասին խօսելու ժամանակ կանգ կառնենք նախամարքսիստական սոցիալիզմի և Մարքս-Էնգելսի ժամանակակից բանուորական շարժման վրայ, այնքան էլ խօսք կլինի Լասալի սոցիալ-քաղաքական գործունէութեան մասին։ Սակայն հէնց այստեղ մենք կարևոր ենք համարում յիշատակել մի քանի համեմատական գծեր ժամանակակից այն խոշոր դէմքերի—Մարքսի և Լասալի—մասին, որոնց գործունէութեան կոնկրետ արտայայտութիւնները (մարքսիստներն ու լասալիանները)՝ միևնոյն քաղաքական միջնավայրում, զուգնթացաբար յառաջադիմել և գրկախառնուել, ձուլուել են իրար հետ ապագայում։

Աւելի քիչ են այն կէտերն ու գծերը, որոնք բաժանում են այդ մարդկանց միմիանցից, քան այն, որոնք միացնում են նրանց։ Ընդհանուր առմամբ, երկուսն էլ արդիւնք են միևնոյն կրթական շրջանի—Հեգելեան դպրոցի, թէև մէկի թէ միւսի վերաբերմունքը դէպի գերմանական կլասիք փիլիսոփայու-

---

38) Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. II եր. 239.

թիւնը՝ ընդհանրապէս, և Հեգելեանիզմը՝ մասնաւորապէս, շատ են տարբերուում միմիանցից։

Երկուսն էլ յեղափոխական շրջանի յեղափոխական տիպեր են։ Մինչդեռ Լասալը մշակելով գիտական մի հսկայական նիւթ և ուսումնասիրելով տիրապետող կարգերի իրաւական հիմքերը, աշխատում էր գտնել ամենաուժեղ միջոցը բուրժուական հասարակութիւնը յեղափոխելու, Մարքսը, ընդհակառակը, մասնագիտական խորազնին հետազօտութեամբ վերլուծել և լուսաբանել է այն յեղափոխական մղիչ ոյժերի հիմքերը, որոնք յեղաշրջում են բուրժուական հասարակութիւնը։

Եթէ Մարքսի և Լասալի տարբերութիւնները պատկերացնենք մեզ որոշ առաձգականութեամբ ըստ այն տարբերութիւնների, որ ունեն գրականական խոշոր դէմքերը՝ նրանց սիրելի գրողները, պատմական անցեալում, կը գտնենք մօտաւորապէս հետևեալը։ Մարքսի սիրած հեղինակները եղել են միշտ՝ Հոմերը, Դանտէն, Շէկսպիրը, Սերվանտէսը և նորերից Բալզակը։ Իսկ Լասալինը եղել են՝ Հուտեն, Լեսինգը, Ֆիխտէն և նորերից Գլստենը։ Սրանք հիմնապէս տարբեր գրական տիպեր են։ Այնտեղ, առաջին շարքում, փայլում են այնպիսի մեծութիւններ, որոնց գրական գործերը վերարտադրում են իրենց մէջ ամբողջ դարեշրջանի պատկերը այն աստիճան օբիեկտիւ կերպով, որ առաւել կամ պակաս չափերով, նոյն իսկ ամբողջապէս չքանում՝ են սուբիեկտիւ մեացորդները, որ, աւելի որոշ արտայայտելով՝ ստեղծագործող սուբիեկտները անյայտանում են մթութեան մէջ՝ իրենց ստեղծագործած բարձր կոթողների յետև։ Երկրորդ շարքի մէջ, ընդհակառակը, հանդիպում ենք այնպիսի գլուխների, որոնց երկերի մէջ ոչ թէ գտնում ենք մենք իրականութեան օբիեկտիւ պատկերը, այլ իրականութեան անդրադառնումը, ձուլուած ու բովուած՝ գրող սուբիեկտների մտաւոր-հոգեկան խառնարանի, ձուլարանի մէջ։

Թուած երկու կարգի հեղինակները, լինելով Մարքսի և Լասալի այսպէս անուանուած գրականական սիմպատիաները, չեն կարող, ի հարկէ, ծառայել իբրև այնպիսի օրինակներ, որոնք սպառէին բոլոր տարբերութիւնները ճշգրտութեամբ՝ Մարքսի և Լասալի մէջ։ Դա համեմատութիւն էր միայն մի որոշ տեսակետից։

Իբրև գիտնական մեծութիւններ՝ բաղմակողմանիութեամբ և աշխարհահայեացքով, նրանք դարձեալ տարբեր տիպեր էին։

Մարքսի մտաւոր հորիզոնը, ընդգրկում էր անհամեմատ մեծ սահման, տիրում շատ աւելի բազմաթիւ մասնաճիւղերի, քան Լասալինը։ Մինչդեռ Մարքսի, ինչ-

պէս և Էնգելսի համար մտաւոր լարուած զբաղմունքները, գիտնական հետազոտութիւնները առաջնակարգ նշանակութիւն են ունեցել, Լասալի համար, ընդհակառակը, այդ բոլորը համեմատաբար երկրորդական տեղ են գրաւել։ Գործնական աշխատանքը, բանուորական շարժումը ամբողջապէս կլանել էին Լասալի անհատական ոյժերը։ «Որքան սիրով կուզենայի—գրում է Լասալը Էնգելսին—գրի չանցնել այն, ինչ որ գիտեմ, եթէ միայն ինձ յաջողուի դրա փոխարէն անել այն, ինչ մենք կարող ենք»։40) Էնգելսը Մարքսի համար ասում է հետևեալը. «Ո՞րքան ուրախ կը լինէր նա մի նոր գիւտով ու բացումով որև է տեսական գիտութեան մէջ, որի գործնական կիրառումը թերևս նախատեսնել դեռ անկարելի լինէր. սակայն բոլորովին այլ ուրախութիւն էր զգում նա (Մարքսը), եթէ մի նոր գիւտ կամ բացում իսկոյն գործադրուէր ինդուստրիայի (արդիւնագործութեան) մէջ կամ առհասարակ պատմական զարգացման համար»։ 41) Լասալի համար գիտութիւնը արժէք ունէր միայն այնքան, որքան նրան, իբրև մի յեղափոխական միջոցի, կարելի էր կիրառել պատմական զարգացման վրայ։

Սակայն ամենաաչքի զարնող և շօշափելի արտայայտուած տարբերութիւնը՝ Մարքսի և Լասալի մէջ, կազմում էր մէկի մատերիալիստական եւ միւսի իդէալիստական աշխարհայեացքը։ Լասալը Հեգելի դպրոցում կնքուած իդէալիստ էր և պատկանում էր նոյն իսկ ոչ ձախակողմեան-արմատական թևին, այլ հին աջակողմեան հեգելեանների շարքին։ Նա ընդունում էր խորին հաւատով Հեգելի սպեկուլատիւ գաղափարը, իբրև մի առաջ-մղիչ ոյժ համաշխարհային պատմութեան։ Սակայն նա չէ ժա սնակցել Շտրաուսի, Բրունօ-Բաուէրի, Ֆոյերբախի նման՝ կազմալուծուող կլասիք փիլիսոփայութեան առթիւ մղուող բանակռուին։ Եւ այս ասածներից չպէտք է եզրակացնել, անպայման, որ Լասալի իդէալիզմը ուղղուած էր Մարքսի մատերիալիզմի դէմ,—որի մասին մենք յետոյ կը խօսենք ամբրամասն կերպով։ Այն, ինչ կապում, միացնում էր Լասալին իդէալիզմի հետ, դա իդէալիզմի մէջ որակուած յեղափոխական ոգին էր. այդ է պատճառը, որ իդէալիստ-յեղափոխական Ֆիխտէն,—ֆրանսիական յեղափոխութիւնը այնպիսի վառ կրքոտութեամբ ըմբռնող

---

40) Фр. Мерингъ, „Письма Ферд Лассаля къ К. Марксу и Ф. Энгелсу», եր. 140.

41) Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. II, եր. 245։

փիլիսոփան,—ամենից շատ էր սիրուած Լասալից։ Ապա թէ ոչ Լասալը ունէր մի սուր հոտառութիւն կեանքի դրականն ու ըմբռնելու և գնահատելու։

Լասալի իդէալիզմը տարբերւում է Մարքսի պատմական մատերիալիզմից նրանով, որ Լասալը պրոլետարիատի դասակարգային կռուի պայմաններն ու անհրաժեշտութիւնը դիտում ու որոնում էր ոչ թէ տնտեսական յարաբերութիւնների մէջ, այլ նա այդ բոլորը վերածում էր նախ իդէալիստական մտածողութեան ձեւերի—փիլիսոփայական և իրաւագիտական մտածողութեան. բայց մի մտածողութեան ձև, որ այնքան յատուկ էր բիւրգերական յեղյեղուկ դարեշրջանին։ Սակայն, այսպէս թէ այնպէս, բացի Մարքս-Էնգելսից չի եղել այդ շրջանում մի այլ խոշոր դէմք, որ այնքան խորապէս ըմբռնէր պրոլետարիատի դասակարգային կռուի համաշխարհային-պատմական մեծ նշանակութիւնը, որքան Լասալն էր։ Եւ այդ տեսակէտից Լասալը մի հաւողուած կոմունիստ էր «Կոմունիստական մանիֆեստի» իմաստով։ Եթէ, իրաւ, Լասալը իբրև պրոլետարական դասակարգային իդէոլոգ ցածր էր կանգնած իր ըմբռնողութեան աստիճանով Մարքս-Էնգելսից, ապա, անկասկած, նա շատ բարձր էր կանգնած իր ժամանակակից բիւրգերական իդէոլոգներից՝ ձախակողմեան-արմատական բանակի մէջ—երիտասարդ հեգելեաններից՝ փիլիսոփայական սահմանում, Ռոտբերտուսից՝ տնտեսական և Եոհան Եակոբից՝ քաղաքական սահմաններում։

11.

Մարքսի առաջին տնտեսագիտական աշխատութիւնը։—Ապրանք և փող։—Ապրանքի գործածութեան և փոխանակութեան արժէքը։—Փողի զանազան ֆունկցիաները։—Իտալիայի պատերազմը 59 թ. և Մարքսի բնակութիւնը Կարլ Ֆոգտի հետ։

Մարքսի երկար տարիների գիտական զբաղմունքների արդիւնքը լոյս է տեսնում 1859 թ., կրելով «Zur Kritik der politischen Oekonomie» («Քաղաքատնտեսութեան քննադատութեան մասին») վերնագիրը։ Դա Մարքսի առաջին գիտական լուրջ վաստակն էր տնտեսագիտական հետազօտութիւնների սահմանում։

Երկար կանգ առնել ինչպէս այս, այնպէս և Մարքսի գալիք մեծ աշխատութիւնների զանազան մասերի վրայ, չէ ներում, իհարկէ, մեր յօդուածների սերիայի առաջին բաժնի ծաւալը։ «Մարքսիզմի» բաժնի մէջ միայն մենք առիթ կ'ունենանք

ընդարձակ և սիստեմատիք խօսելու Մարքսի շօշափած ու լուսաբանած շատ ու շատ խնդիրների և երևոյթների մասին։ Այստեղ միայն քիչ ծանրանանք ընդհանուր բովանդակութեան վրայ։

«Քաղաքատնտեսութեան քննադատութեան մասին» վերնագրով աշխատութիւնը պիտի առաջին հատորը լինէր նոյն ծրագրով ապագայում գրուելիք մի շարք հատորների։ Եւ այդ նոյն վերնագրի տակ Մարքսը պիտի շօշափէր մի շարք ծանրակշիռ խնդիրներ ու տնտեսական կաթեգորիաներ՝ յատուկ կապիտալիստական արդիւնաբերութեան դարեշրջանին։—Կապիտալ, կալուածատիրութիւն, (կամ հողային սեփականութիւն) վարձու աշխատանք, պետութիւն, արտաքին առեւտուր, համաշխարհային շուկայ (կամ վաճառանոց)։ Իր առաջին հատորի մէջ, Մարքսը խօսում է միայն կապիտալի մասին ընդհանրապէս, ընդարձակ պարզաբանելով միայն ապրանքի և փողի ֆունկցիաները, պատմութիւնը։ Մնացած մասերը այլևս այդ ծրագրով և այդ վերնագրի տակ չէ հետազօտում Մարքսը, այլ ութ տարի անցած արտադրում է իր մտաւոր հսկայ երկը՝ «Կապիտալը» և այդտեղ ուրիշ սիստեմով ուսումնասիրում տնտեսական կաթեգորիաները։

«Քաղաքատնտեսութեան քննադատութիւնը» էապէս ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ «Կապիտալի» առաջին հատուածը, ուր սակայն, դուրս է ձգուած արժէքի և փողի պատմութիւնը։

Մարքսը տալիս է նախ իր գրքի յառաջաբանում մի փոքրիկ նկարագիր իր կրթական-ուսումնական անցեալից։ Թէև Մարքսի ուսումնասիրութեան մասնաճիւղը եղել է իրաւաբանութիւնը, այնուամենայնիւ դա ստորադաս նշանակութիւն է ունեցել նրա համար. նա նուիրուած է եղել առաւելապէս փիլիսոփայական և պատմական գիտութիւններին։ Տնտեսական հարցերով նա զբաղուել է աւելի ուշ, կեանք մտնելուց՝ իր հրապարակախօսութեան առաջին շրջանում, երբ խմբագրում էր (1842—43) «Rheinische Zeitung»-ը։

Ապա Մարքսը կլասիք ձևերի մէջ մշակած առաջ է բերում յառաջաբանում պատմական մատերիալիզմի վերաբերեալ այն հռչակաւոր դեֆինիսիոնը (սահմանաւորումը), որ մինչև օրս էլ համարւում է մատերիալիստական աշխարհահայեացքի էսսենցը, կորիզը։ Դրա և դրա լուսաբանութեան մասին մենք կը խօսենք յետոյ, իր տեղին։

«Առաջին հայեացքից իսկ բիւրգերական հարստութիւնը երևում է որպէս ապրանքների մի անբաւ ու ահագին կուտակում, իսկ իւրաքանչիւր ապրանք երևում է որպէս մի էլեմեն-

տար գոյացութիւն»—այսպէս է սկսում Մարքսը իր հետազօտութիւնը։ Նա ուսումնասիրում է հասարակութեան մի որոշ պատմական ձեւ։ Նա չէ պնդում, թէ ինչպէս պէտք է կամ պիտի լինեն ապրանքն ու փողը ընդհանուր փիլիսոփայական տեսքով, այլ թէ ինչպէս են նոքանք իրապէս արդի բուրժուական հասարակութեան մէջ։ Մարքսը հիմնական քննութեան է ենթարկում աշխատանքի արժէք կազմող որակը. նա ցոյց է տալիս, թէ ինչ կարգի աշխատանքն է՝ ինչու եւ ինչպէս ապրանքի արժէք արտադրում։ Ապա նա վերլուծում է ապրանքի և փողի փոխադարձ յարաբերութիւնը։ Նա մերկացնում է աշխատանքի երկուստեք բնոյթը նորագոյն հասարակութեան մէջ։ Իւրաքանչիւր ապրանք ունի երկու կարգի արժէք՝ գործածութեան եւ փոխանակութեան արժէք։ Մի իրի գործածութեան արժէքը արտայայտւում է հէնց իրի գործածութեան կամ սպառման պրոցեսի մէջ։ Տարբեր են անպայման ապրանք-իրերի գործածութեան եղանակն ու չափը։ Օրինակ ցորենը, թուղթն ու կտաւը իրեր են, որ ունեն տարբեր կարգի ու չափի գործածութիւն։ Փոխանակութեան արժէքը աչքի է ընկնում ամենից առաջ իր քանակական յարաբերութեամբ, որի մէջ միմիանց հետ փոխանակւում են գործածական արժէքները։ «Գործածական արժէքները կազմում են անմիջական կենսական միջոցներ, իսկ այդ կենսական միջոցները իրանց կողմից արդիւնքներ են հասարակական կեանքի, հետեւանք մարդկային կեանքի արտադրած ոյժի, ուրիշ խօսքերով դա առարկայացած աշխատանք է»։ 42) Մարքսի այս խօսքերից պարզ երեւում է, թէ որ աստիճան օրգանական յարաբերութեան մէջ է դնում նա մարդկային ֆիզիկական-արտադրողական ոյժը և այդ ոյժի արդիւնաբերած շօշափելի արդիւնքները, վերացնելով այն մթապատ քօղը, որով բուրժուական վուլգեր-տնտեսագէտները վարագուրում են միմեանցով պայմանաւորուած և իրար հետ սերտ շաղկապուած մեծութիւններն ու դրութիւնները—կենսական արժէքները և մարդկային արտադրողական ոյժը։

Իւրաքանչիւր իր, որպէս ապրանք, կազմում է մի անմիջական միութիւն գործածական և փոխանակութեան արժէքի։ Ապրանքների իսկական յարաբերութիւնն ու առընչութիւնն արտայայտւում է փոխանակութեան պրոցեսի բոպէին։ Սակայն ապրանքը, որպէս փոխանակութեան արժէք, դառնում է մի չափ, որով չափւում են բոլոր միւս ապրանքների արժէքները։ Եւ ընդհակառակը, իւրաքանչիւր ապրանք, որով չափւում են

---

42) K. Marx, «Zur Kritik der politischen Oekonomie» եր, 3.

ուրիշ ապրանքների արժէքները, դառնում է փոխանակութեան արժէքի ադէքուատ գոյութիւնը։ Այդպիսով մի ապրանքի մէջ, որպէս այդպիսին, լուծուում է իր մէջ պարունակուած հակասութիւնը, և նա ինչպէս առանձին գործածական արժէք, ստանում է միաժամանակ ընդհանուր էքվիվալենտի նշանակութիւն, ուրեմն և ընդհանուր գործածական արժէք։ Հէնց այդ ապրանքն է, որ կոչւում է փող։

Փողը ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ մի ապրանք, որի մէջ բիւրեղանում է ապրանքների փոխանակութեան արժէքը։

Փողային բիւրեղը կազմում է փոխանակութեան պրոցէսի մի անհրաժեշտ արդիւնքը։ Նա զարգացել է բնազդական եղանակով, կտրելով պատմական երկար ճանապարհ։ Որքան յառաջադիմում էր առևտուրը, և որքան փոխանակութեան արժէքները ապրանքներ էին դառնում. որքան, ուրեմն, փոխանակութեան արժէքը ինքնուրոյնանում է, առանց անմիջապէս կապուած լինելու գործածական արժէքի հետ, այնքան էլ նա աւելի էր մղում դէպի փողի առաջացման պահանջը, փողի կազմաւորումը։

Մարքսը ընդարձակ պատմում է փողի սկզբնական տեսակները, նրա փոփոխուող ձևերը և զանազան ֆունկցիաները, ապա կանգ է առնում ազնիւ մետաղի, մանաւանդ ոսկու վրայ, և ցոյց տալիս վերջինիս առանձնայատկութիւնները, փող լինելու ամենից շատ առաւելութիւնները, ամենից աւելի ֆունկցիաներ ունենալու յարմարութիւնը։

Մարքսը նկարագրում է փողի խաղացած բաղմակողմանի դերը բիւրդերական հասարակութեան մէջ, լոյս սփռելով ամենուրեք այն տեղերը, ուր մութ ու միստիքական էին մինչև այդ ժամանակ բուրժուական տնտեսագէտների համար։ Մարքսը թեում ու հիմնաւորում է փողի զանազան ֆունկցիաները, որպէս՝ վճարման միջոց, արժէքի մասշտաբ, շրջանառութեան միջոց, գանձելու կամ պահպանելու միջոց։ Մարքսը ինքն էր, որ առաջին անգամ ցոյց տուաւ փողի հասարակական արժէքը։ «Արդի տնտեսագէտները մոռանում են, որ փողը մի սոսկ իր չէ, այլ ներկայացնում է իրանից արդիւնաբերութեան մի հասարակական յարաբերութիւն, սակայն մի բնական իրի ձևով, իր որոշ յատկութիւններով»։43)

Ինչպէս նկատեցինք սկզբում, Մարքսը իր այդ գրքի մէջ հետազօտութեան օբիեկտ է ընտրում միայն ապրանքը և փողը։ Շարունակութիւնը ընդհատուելով ամբողջ տարիներ, նա

---

43) K. Marx, Ibid, եր. 11.

կարողանում է միւս ֆակտորների, մանաւանդ իրա՝ կապիտալի, մասին խօսել միայն իր գլուխ գործոցի մէջ, որի վրայ կանգ կ'առնենք իր տեղին։

1859 թ. Կաբինետային մասնագէտը կրկին մտնում է քաղաքականութեան ասպարէզը։ Լուի Բոնապարտը, որ այնքան մեծ ջանքերով հոգում էր բուրժուազիայի դիկտատուրայի մասին, դարձել էր ժամանակակից եւրոպական բուրժուազիայի համար մի կիսաստուած. մանաւորապէս սիրուած էր նա գերմանական բուրժուազիայից։ Սակայն հէնց որ նա իր երերող գահը ամրացնելու համար պաշտպան հանդիսացաւ Իտալիային և պատերազմ յայտարարեց Աւստրիայի դէմ, յանկարծ նա հրաշակուեց որպէս պաշտպան ու նախանձախնդիր դեմոկրատական գաղափարների։ Իսկ Պրուսական կառավարութիւնը, որ այն ժամանակ երազում էր Մեծ-Պրուսիա հիմնելու Աւստրիայի հաշուին, աշխատեց շահագործել լիբերալ բուրժուազիայի բարեթեք տրամադրութիւնը և պղտոր ջրում ձուկ որսալ։ Լոնդոնում հիմնուած «Volk» («Ժողովուրդ») անունով մի լրագիր, որին աշխատակցում էին Մարքսը և իր ընկերները, մերկացնում է ամբողջ գաղտնիքը՝ ֆրանսիական կառավարութեան «ազատագրական» քայլի միտքն ու նպատակը։ Այդ դէպքը առիթ է տալիս Կարլ Ֆոգտ անունով մի վարձուած ֆիլիստրի, հայհոյանքներով լի մի պամֆլետ-գրուածք ուղղելու Մարքսի դէմ, որին Մարքսը մի փառաւոր, կլասիք բրոշիւրայով՝ «Herr Vogt» («Պարոն Ֆոգտ») վերնագրով, պատասխանում է, փաստապէս հիմնաւորելով այն բոլորը, ինչ արծարծուել են «Volk»-ի մէջ Իտալիայի պատերազմի առթիւ։ Ինչպէս Էնգելսը իր «Po und Rhein» («Պո և Հռենոս») գրքի մէջ՝ գրուած Իտալիայի պատերազմի առթիւ, այնպէս էլ Մարքսը իր աշխատութեան մէջ հերքում է այն թիւր կարծիքը, որ իբր Աւստրիայի տիրապետութիւնը Իտալեայում, համապատասխանում է գերմանական շահերին։ Մարքսը ցոյց է տալիս, որ Իտալիայի, այսպէս ասած՝ բոնապարտիստական ազատագրութիւնը ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ մի առիթ, Ֆրանսիան՝ բոնապարտեան ճնշուած լծի տակ պահելու, Իտալիայի վրայ ուժեղացնելու իր ազդեցութիւնը, Ֆրանսիայի «բնական սահմանները» ձգելու գերմանական հողի վրայ, Աւստրիային դարձնելու Ռուսաստանի ձեռքին մի գործիք և այլն։ Այս բոլոր գաղտնի շարժառիթներն էին, որոնց Մարքսը կլասիք վարպետութեամբ մերկացնում է իր գրքի մէջ, հակառակ կաշառուած Կարլ Ֆոգտի բոնապարտեան փառաբանութեան։

Մարքսը, ինչպէս և Էնգելսը, հետաքրքրում են 1857 թ.

վրահասած մեծ առևտրական ճգնաժամի պատճառները և նրա առաջացման հետևանքները «New Iorker Tribune» թերթի մէջ։

12.

Բանուորական շարժումը արևմտեան Եւրոպայում՝ Գերմանիայում, Անգլիայում և Ֆրանսիայում։—Համաշխարհային ցուցահանդէսը Լոնդոնում։—Անգլ. և Ֆրանս. բանուորների միտինգը ինպատ լենական ապստամբութեան։—«Ինտերնացիոնալ»-ի սկզբնաւորութիւնը։—Հիմնադրութեան պատճառներն ու առիթները։—Մ.-Մարտինի միտինգը։—«Տրէդ-ունիոնիստները և «Ինտերնացիոնալը»։—«Կոմունիստական Միութեան» և «Ինտերնացիոնալի» հիմնադրութեան մոմենտները։—«Ինաուգուրալ ադրեսի» առաջնորդող մտքերը։—Հակամարտ տենդենցներ սեփականազուրկ և սեփականատէր դասակարգերի մէջ։—Տասը ժամեայ աշխատանքի օրինագիծը և կոոպերատիւ շարժումը։—Պրոլետարիատի ազգային և միջազգային կազմակերպութիւնը։—Բանուոր դասակարգի արտաքին քաղաքականութիւնը։

—

Անցեալ դարու 60-ական թուականների սկզբներին նորից սկսում է եռալ բանուորական շարժումը արևմտեան Եւրոպայի առաջնակարգ երկրներում։ Որքան զարգանում էր կապիտալիստական արդիւնագործութիւնը և տոն տալիս հսկայական ձեռնարկութիւններին, որքան խտանում ու լճանում էր գործարանական պրոլետարիատը մայրաքաղաքներում, այնքան էլ ամուր հիմք է տրւում պրոլետարիատի կազմակերպչական գործին, այնքան էլ բանուոր դասակարգը կռուի նպատակայարմար միջոցների համար հող է գրաւում իր ոտքի տակ։ Եթէ բուրժուական յեղափոխութիւնների շրջանում պրոլետարիատը մի անկազմակերպ ու անծրագիր զանգուած էր, մութ ու անգիտակից ամբոխ, ենթարկուած բուրժուական դեմոկրատիայի յեղափոխական տրամադրութեան ու ձգտումներին, ապա 60—70-ական թուականներին նա դրեթէ կապիտալիստական բոլոր երկրներում հետզհետէ կազմակերպւում է քաղաքականապէս և իր դասակարգային-կուսակցական ուրոյն դիրքը գրաւում քաղաքական կուսակցութիւնների շարքում։ Ամեն մի պետութեան մէջ, ամեն մի ազգային շրջանակում առաջանում են պրոլետարական զատ-զատ կազմակերպութիւններ։

Գերմանիայում արդէն Լասալի ուժեղ ջանքերով հիմնուել էր «Der Allgemeine Deutsche Arheiterverein» («Ընդհանուր-Գերմանական Բանուորական Միութիւն») անունով բանուորական մի ընկերութիւն 1863 թ. մայիսի 23-ին, որ դարձաւ միաժամանակ սաղմային սկզբնաւորութիւնը ներկայ գերմանական սոցիալդեմոկրատիայի։ Անգլիայում դրեթէ բոլորովին չքացել էր չարտիստական-բանուորական շարժումը՝ ցա-

մաքային Եւրոպայում յեղափոխութեան ճնշումից յետոյ։ Սակայն տասը ժամեան աշխատանքի օրինագիծը («Zehnstundebill»), որ այնքան թանգ գնով յաջողուեց անգլիական բանուորութեան իրականացնել, նոր ոգի ու եռանդ ներշնչեց պրոլետարիատի առաջաւոր շարքերի մէջ։ Արագ քայլերով յառաջադիմեց նոր վերածնուած տրէդ-ունիոնիզմը—պրոֆեսիոնալ բանուորական շարժումը Անգլիայում՝ յատկապէս ինդուստրիափոստ և առևտրական քաղաքներում։ 1857 թուականի առևտրական կրիզիսը եկաւ անգլիական բանուորներին մի անգամ ևս ապացուցանելու, որ նրանք չպէտք է յոյս ու ակնկալութիւն դնեն արդի բուրժուական հասարակութեան վրայ։ Մանաւանդ խիստ մեծ զարկ տուաւ Արևմտ. Եւրոպայի բանուորական շարժման Ամերիկայի քաղաքացիական կռիւը, որը, ըստ Մարքսի, նոյնքան մեծ խթան ու ազդակ եղաւ եւրոպական պրոլետարիատի համար, որքան Ամերիկայի անկախութեան կռիւը 18-րդ դարում եղաւ խթան ու ազդակ եւրոպական բուրժուազիայի համար։ Անգլիական բանուորութեան արիստոկրատական խաւերը, որոնք սահմանափակւում էին միայն աշխատավարձի բարձրացման և աշխատանքի ժամանակի կրճատման կռուով, սթափուեցին այդ ինքնախաբէութիւնից և տեղ գրաւեցին պրոլետարիատի դասակարգային կռուի միջազգային սահմանում։

Համեմատաբար աննպաստ դրութեան մէջ էր ֆրանսիական պրոլետարիատը։ Ոչ մի երկրում բանուոր դասակարգը այնքան ենթակայ չէ եղել զանազան աղանդաւորների խաղերին, որքան Ֆրանսիայում, որտեղ պրոլետարիատը խմբուած էր միմիանց հետևող և միաժամանակ գոյութիւն ունեցող հակամարտ աղանդաւորների թշնամական բանակներում։ Մեծ ուտոպիստների դպրոցներից յետոյ ֆրանսիական բանուորութիւնը երկու գլխաւոր խմբերի էր բաժանուել՝ բլանքիստներ եւ պրուդոնիստներ, որոնցից առաջինը բարրիկադների կռուի, իսկ երկրորդը մանր-բուրժուական խաղերի մէջ էր որոնում պրոլետարիատի դասակարգային ազատագրութիւնը։ Իսկ աւանտիւրիստ Բօնապարտը՝ բուրժուազիայի այդ կիսաստուածը, տըքնում էր ձրի ժողովրդականութիւն վաստակել նաև բանուոր դասակարգի մէջ։ Նա հետևում էր ճիշտ այն նենգամիտ քաղաքականութեան, ինչպիսին փորձեց Բիսմարկը գերմանական պրոլետարիատի վերաբերմամբ 70-ական թուականներին՝ իր ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեան քաղաքականութեամբ։ Սակայն մենք գիտենք այսօր, թէ ինչ վաստակեց մէկը թէ միւսը իրանց լարած թակարդներից։ Բօնապարտը, օրինակ, նպաստեց ֆրանսիական բանուորներին

ազատ ընտրելու իրանց պատգամաւորներին և ուղարկելու Լոնդոն 1862 թ. կայանալիք համաշխարհային ցուցահանդէսին։

Ֆրանսիական պրոլետարիատի ամենագիտակից ներկայացուցիչները Լոնդոնում շուտով մտերմացան տեղական բանուորութեան պարագլուխների հետ։ Օգոստոսի 5-ին տեղի ունեցաւ յանուն «միջազգային եղբայրութեան» մի հանդէս զուտ բանուորական ներկայացուցիչներից, ուր արծարծուում է երկու ազգի բանուորներից մի սերտ, հաստատուն ու տեւական միութիւն հիմնելու միտքը։ Ցարաբերութիւններն աւելի սերտացան լեհական ապստամբութեան առթիւ 1863 թ.։ Արևմտեան Եւրոպայի կուլտուրական ժողովրդների աւանդական սիմպատիաները դէպի լեհ ժողովուրդը ուժեղ արտայայտութիւն ունեցան ամենից առաջ եւրոպական պրոլետարիատի մէջ։

1863 թ. յուլիսի 23-ին կայանում է Լոնդոնում մի մեծ միտինգ անգլիական և ֆրանսիական բանուորների ձեռներէցութեամբ յօգուտ յեղափոխական լեհ ժողովրդի, որ ազատագրական ծանր կռիւ էր մղում ռուսական բռնակալութեան դէմ։ Այդ նոյն միտինգին, մտքերի շփման այդ կենդանի բոպէներին, միտք է յղանում բանուորների մէջ հիմնելու պրոլետարիատի մի միջազգային միութիւն։ Ընտրւում է մի յանձնաժողով, որը կոչ է ուղղում Ֆրանսիայի բանուորներին միանալու միջազգային հողի վրայ՝ պաշտպանելու համար շահագործող աշխատանքի շահերը։ «Ամեն անգամ—ասում է կոչը—երբ անգլիական բանուորութիւնը կռւում է իր օրավարձը բարձրացնելու կամ աշխատանքի ժամերը կրճատելու համար, սպառնում են անգլիական կապիտալիստները աշխատանքի օտար ոյժերի ներմուծումով՝ Ֆրանսիայից, Գերմանիայից, Բելգիայից և ուրիշ երկրներից։ Կապիտալիստները օգտուելով միջազգային բանուորների միաբան ու համերաշխ գործակցութեան բացակայութիւնից, կատաղի մրցութեան ասպարէզ են բաց անում նրանց համար»[43])։

Դրանով հիմք է դրւում Մարքսի յայտնի «Ինտերնացիոնալի»—«The Working Mens International Assoziation» («Միջազգային բանուորական խմբակցութեան»)—սաղմային սկզբնաւորութեան։ Անհրաժեշտ է փոքր ինչ երկար ծանրանալ «Ինտերնացիոնալի» վրայ, որովհետև դա Մարքսի սոցիալ-քաղաքական գործունէութեան մի փառահեղ հատուածն է կազմում։

---

[43]) Fr. Mehring «Geschichte der deutschen Soizaldemokratie» հատ. III, եր. 169.

Ոմանք թիւրիմացօրէն բացատրում են, որ «Ինտերնացիօնալի» հիմնադրութեան իսկական պատճառները եղել են Լօնդօնի համաշխարհային ցուցահանդէսը և լեհական ապստամբութեան համար կազմուած միտինգը։ Դա մի միամիտ կարծիք է, պատմական երևոյթների ծագման աղբիւրները չհասկացուած դատողութիւն է բիւրգերական քննադատների կողմից։

«Ինտերնացիօնալի», որպէս կազմակերպուած, գիտակից ու մարտնչող պրոլետարիատի միջազգային համախմբման միտքն ու անհրաժեշտութիւնը յղացել և արտայայտութիւն է ունեցել դեռ 40-ական թուականների վերջերին՝ յանձինս «Կոմունիստական Միութեան»։ 60-ական թուականների «Ինտերնացիօնալը» «Կոմունիստական Միութեան» մտքի լրացումը, բովանդակութեան ամբողջացումն է, նրա աստիճանական զարգացման հասունացած արդիւնքն է, ուրիշ ոչինչ։ Եւ իբրև այդպիսին, «Ինտերնացիօնալը» պիտի առաջ դար իր հերթին պատմական անհրաժեշտութեամբ։ Լոնդոնի համաշխարհային ցուցահանդէսն ու լեհական միտինգը եղել են լոկ առիթներ, երկրորդական նպաստաւոր պարագաներ, «Ինտերնացիօնալը» գլուխ բերելու համար, ուրիշ ոչինչ։

Յանձնաժողովի արձակած կոչը ոգևորում է Փարիզի բանուորներին այն աստիճան, որ նրանք շտապով ձեռնարկում են փողի հանգանակութեան և ի պատասխան Լոնդոնի բանուորների գրութեան, ուղարկում են այնտեղ մի առանձին պատգամաւորութիւն։ 1864 թ. սեպտեմբերի 28-ին յանձնաժողովը ձեռնարկում է մի մեծ միտինգի Ս.-Մարտինի ժողովարանում, բաղկացած բոլոր առաջնակարգ երկրների բանուորներից—անգլիացիներ (50 պատգամաւորներ), գերմանացիներ (10 պատգ.), ֆրանսիացիներ (9 պատգ.), իտալացիներ (6 պատգ.) լեհեր (2 պատգ.). և այլն։ Միտինգի նախագահն էր պրոֆեսոր Բեսլին, Լոնդոնի մի յայտնի ֆիլանթրոպ, որ իր նամակներով և յօդուածներով, իր վառվռուն ճառերով միշտ պաշտպանել է բանուորական շահերը և պայքարել մանչեստերեան բուրժուազիայի դէմ։ Միտինգում արտասանած բոլոր ճառերը ունէին միօրինակ ընդհանուր տենդենցը—որքան կարելի է շուտ և ամուր հիմքերի վրայ կառուցանել մի միջազգային բանուորական միութիւն՝ հակելու և պաշտպանելու պրոլետարիատի միջազգային շահերն ու քաղաքականութիւնը։ Ղստացած շարքերով, կազմակերպուած ոյժերով եւ գիտակից զէնքերով կռուել միջազգային պատմական մեծ թշնամու դէմ—բուրժուազիայի կապիտալիստական շահագործութեան և քաղաքական տիրապետութեան ու ճնշումների դէմ։ Դա ժամանակի հասունացած պահանջ էր,

պէտք է արտայայտուէր վաղ թէ ուշ։ Միտինգը ընտրում է իր միջից մի կոմիտէ, որ մշակէ «Ինտերնացիոնալի» կանոնադրութիւնը և այն յաւերժացնող մի տօնական ձօն—«Inauguraladresse»։ Այդ կոմիտէի մէջ է լինում ի միջի այլոց և Մարքսը։

Պէտք է խոստովանել որ «Ինտերնացիոնալի» հիմնադրութեան գործում մեծ դեր է խաղացել անգլիական բանուորութիւնը։ Ոչ միայն այն պատճառով, որ հիմնադրութեան և ընդհանուր մարմնի տեղն ու նիստը լինելով Անգլիայում, տեղական բանուորութիւնը անհրաժեշտօրէն մեծ ներկայացուցչութիւն է ունեցել միտինգում, այլև գլխաւորապէս և հիմնապէս այն պատճառով, որ անգլիական պրոլետարիատի մեծ մասամբ փորձուած ու հմուտ ներկայացուցիչները—բազմաթիւ գործնական գլուխներ տրէդունի նիստներից—ուժեղ զարկ են տուել «Ինտերնացիոնալին» և նրա ղեկավարութիւնը գրեթէ փաստապէս իրանց ձեռքն առել։ Տրէդունիոնիստները—ամբողջ Եւրոպայում միակ ուժեղ կազմակերպութիւնը տնտեսական հողի վրայ—կենսապէս շահագրգռուած էին, որ ցամաքային Եւրոպայի բանուորութիւնը ևս կազմակերպուէ և դէմ դնէ իր հաւաքական ոյժերը կապիտալիստական շահագործութեան, որպէսզի Անգլիայի պրոլետարիատը այնքան չտուժէ կապիտալիստների ներմուծած բանուորների կատաղի մրցութեան ազդեցութեան ներքոյ։ Թէ որքան են օգնել ու նպաստել տրէդունիոնիստները «Ինտերնացիոնալի» հիմնադրութեան և առաջ խաղացման գործին, դա վկայում է նոյնիսկ ինքը Մարքսը։ [44])

Դարձեալ կենտրոնական տեղ է գրաւում Մարքսը։ Այն ժարդը, որ 40 տարի թուականներին տոն էր տալիս «Կոմունիստական Միութեան» գործունէութեան, որ հաստատել, տեսականապէս հիմնաւորել էր «Միութեան» գոյութիւնը, այժմ նոյն այդ ուժեղ ու անսասան տիպը նմանօրինակ դեր խաղում է «Ինտերնացիոնալի» մէջ։ Մարքսն էր, որ մշակեց կանոնադրութիւնը, նա էր, որ գրեց յայտնի «Ինաուգուրալ ադրեսը» (Ձօնական հասցէն) «Ինտերնացիոնալի» համար։

17 տարի առաջ, երբ Մարքսն ու Էնգելսը հիմք էին դնում «Կոմունիստական Միութեան»՝ մանիֆեստի սաուերագծած սկզբունքների վրայ, այլ էր ժամանակի պահանջն ու շըր-

---

[44]) Տես Մարքսի նամակը ուղղած Բուգելմանին («Neue Zeit» XX տարի, հատ. II, եր. 31)։ «Ինտերնացիոնալը»—ասում է Մարքսը—կամ ասելի շուտ՝ նրա ընդհանուր կոմիտէն շատ կարևոր մարմին է, որովհետև այդտեղ մասնակցում են անգլ. տրէդ-ունցիոնիստների պարագլուխները։

ջապատ յարաբերութիւնները, քան 17 տարի յետոյ, «Ինտերնացիոնալի» հիմնադրութեան օրով։ Առաջ ընտրեալների մի ընկերութիւն էր, իր պրոպագանդիստական գործունէութեամբ, յեղափոխական ձգտումներով՝ դէպի յեղափոխութեան թուացող ժամանակը զալուստը։ 17 տարի յետոյ, ընդհակառակը, ժամանակի հրամայական կարիքը ստիպում էր կազմակերպել և գիտակցական հողի վրայ դնել մասսայական շարժումը ժամանակակից միջազգային բանուորութեան, ընդգծել դասակարգային կռուի անշեղ ճանապարհներ ու գործնական նպատակներ։ Մարքսը կարիք չունէր «Ինտերնացիոնալի» մէջ պատմափիլիսոփայական ունիվերսալ դիտողութիւններով խոշոր հեռանկարներ բացատրելու, ինչպէս «Կոմ. մանիֆեստի» մէջ էր, այլ նա բաւականացել է միայն մերկ իրողութիւնները շօշափելով և լուսաբանելով մի այնպիսի ժամանակ, երբ հետզհետէ կապիտալիստական շահագործութիւնը հասնում էր իր ճնշիչ ու այլասերող աստիճանին։

Մարքսի պատմական այդ յայտնի յիշատակագիրը սկսում է իր դիտողութիւնները նրանով, որ բանուոր դասակարգի տատապող կարիքը ոչ թէ նուազել է 1848—64 թ., այլ ընդհակառակը աճել է, չնայելով արդիւնագործութեան և առևտրի անօրինակ բարգաւաճման հէնց այդ շրջանում։ Իբրև աչք ծակող փաստ նա առաջ է բերում «Կապոյտ գրքերի» զարհուրելի վիճակագրութիւնը՝ անգլիական բանուորների թշուառ կացութեան վերաբերեալ և համեմատում ունևոր դասակարգերի անչափ հարստութեան և յոյժի աճման հետ, որոնց համար այնքան պիրճախօս փաստեր էր բերում ֆինանսական մինիստր Գլադստոնը իր ճառի մէջ՝ արտասանած բիւդջէի առթիւ։ Ամենից առաջ և ամենից շատ Անգլիայումն է, որ պրոլետարիատի ծայրայեղ թշուառութիւնն ու այլասերումը հասել է հրէշային չափերի, որովհետև Անգլիան է, ուր կապիտալիստական շահագործութիւնը ամենից արագ այնքան ծաւալուել ու խորացել է։ Այդ թշուառութեան ու այլասերման տենդենցը նկատելի է միւս երկրներում ևս այնքան, որքան զարգանում, յառաջադիմում է կապիտալիստական արդիւնաբերութիւնը և դրանից անբաժան երևոյթների շարքը։ «Այդ բոլոր երկրներում—ասում է «Ինտերնացիոնալի» «Ինաուգուրալադրեսը»—արդիւնագործութեան զարգացումն ու ներմուծուող և արտահանուող ապրանքների առևտրի ծաւալումը հասել են անսովոր չափերի։ Բոլոր տեղերում յոյժն ու հարստութիւնը իրանց թափով ու քանակով կենտրոնացել են սեփականատէր դասակարգերի ձեռքը։

«...Ամենուրեք խորասուզուում է աշխատաւոր դասակարգերի խոշոր զանգուածը աւելի ու աւելի խոր թշուառութեան գիրկը, առնուազը այն չափով, որ չափով վերին դասակարգերը բարձրանում էին իրանց սոցիալական դիրք ու աստիճանով։ Բրիտանական թագաւորութեան մայրաքաղաքում սովամահ վիճակը դարձել է գրեթէ մի սոցիալական ինստիտուցիա այն ժամանակ, երբ տնտեսական յառաջադիմութիւնը նոր դարագլուխ է բաց արել պատմական կեանքի մէջ։» [45])

Ապա «Ինտերնացիոնալի» յաւերժագիրը պատկերացնում է մոտիկ անցեալի ու ներկայի դրութիւնը։ Նա կրքով, զայրոյթով ու դառն շնչտումներով նկարագրում է յիսունական թուականների հակայեղափոխութեան կործանիչ ներգործութիւնն ու այլանդակ հետեւանքները աշխատաւոր մասսաների վրայ։ Ցամաքային Եւրոպայի պրոլետարիատի անկումը իր ներգործական հետեւանքներն է թողել նաև ջրանցքի միւս ափին գտնուող բանուորների վրայ, դիմադրութեան ու չդիջանելու ոյժ ներշնչելով գործարանական թէ կալուածատիրական լորդերին։ Միայն երկու խոշոր իրողութիւններ է յիշատակում Մարքսը իր «յիշատակագրի» մէջ, որոնք որպէս լուսաւոր գծեր մխիթարական պատկերի դրօշմ են կնքում ամբողջ շրջանի մութ ու սև էջերի վրայ։

Նախ տասը ժամեայ աշխատանքի օրինագիծը (Zehnstundenbill) Անգլիայում, որ իր բարերար հետեւանքներով մի մեծ յաղթութիւն է հռչակում Մարքսը անգլիական բանուորների համար։ Այդ օրինագիծը համարում է նա որպէս «սկզբունքի մի յաղթանակ»։ Աշխատանքի ժամանակի կրճատման համար մղուելիք կռիւը հարկադրում է պետութեան ուղղակի միջամտելու այդ կռուի պրոցեսին, որ կոչուած է բեկանելու առաջարկ և պահանջ կոչուած օրէնքների կոյր կանոնը։ Այդ օրէնքները կազմում են բուրժուազիայի քաղաքատնտեսութեան էութիւնը։ Մինչդեռ սոցիալական հոգատարութեամբ կանոնաւորուող արդիւնաբերութեան օրէնքները կազմում են այն քաղաքատնտեսութեան էութիւնը, որը պաշտպանում է բանուոր դասակարգի շահերը։ «Եւ հէնց այդ պատճառով—ասում է Մարքսը իր ադրէսի մէջ—տասը ժամեայ աշխատանքը ոչ միայն մի մեծ գործնական յաջողութիւն է, այլ և նա մի սկզբունքային յաղթանակ է. առաջին անգամ օրը ցերեկին են-

---

[45]) Gustav Iaeckh, «Die Internationale», եր. 27.

թարկուեց ու ընկճուեց բուրժուազիայի քաղաքատնտեսութիւնը բանուոր դասակարգի քաղաքատնտեսութիւնից»։46)

Երկրորդ դեռ աւելի մեծ յաջողութիւնը, որ Մարքսը այնքան ջերմ տողերով դրուատում է, կազմում է աշխատանքի քաղաքատնտեսութեան յաղթանակը կապիտալի քաղաքատնտեսութեան դէմ։ Դա կօոպերատիւ ձեռնարկութեան էքսպերիմենտն է. մի սկզբունքի յաղթանակ զուտ գործարանական կեանքում, բանուորների ձեռներէցութեամբ, առանց պետութեան և օրէնսդրական մարմնի միջամտութեան։ Այդ սոցիալական էքսպերիմենտների արժէքը կայանում է ըստ Մարքսի հետևալում՝ «Կօոպերատիւ ձեռնարկութիւնները ցոյց են տալիս իրապէս, որ արդիւնաբերութիւնը կարող է մեծ չափով և արդի գիտութեան առաջարկած միջոցներով տեղի ունենալ, առանց ձեռնարկուների (կապիտալիստների) մի առանձին դասակարգի գոյութեան, որ իր կողմից գործելու տեղ է տալիս բանուորների դասակարգին։ Նրանք ցոյց են տալիս, որ աշխատանքի միջոցները արդիւնքներ, պտուղներ տալու համար, կարիք չունեն որպէս տիրապետութեան և շահագործութեան գործիքներ՝ ընդդէմ աշխատաւորների, մենավաճառ լինելու. և որ վարձու աշխատանքը, ստրկական, ինչպէս և ճորտական աշխատանքը միայն անցողակի և ստորադաս մի ձև է, որը՝ թեքուած դէպի կործանումը, պիտի անդարձ չքանայ զուգորդուած աշխատանքի առաջ, իսկ վերջինս կը կատարէ իր դժուար խնդիրը կամաւոր ձեռքով, ուրախ սրտով և հեշտ մտքով։»47)

Այս երկու երևոյթները, ինչպէս ասացինք, Մարքսը կամ «Ինտերնացիօնալի» «Ինտուգուրալ հասցէն» գնահատում էր սկզբունքային տրժէքի և գործնական տեսակէտից։ Սակայն թող ընթերցողը ամենևին սխալ չհասկանայ այդ բերած ցիտատները և չեզրակացնէ դրանից, որ Մարքսը իբր տարուած էր ըէֆօրմիզմով 60-ական թուականներին։ Մէկ թէ միւս երևոյթի արժէքը գնահատում էր Մարքսը իբրև լոկ դեմօկրատական բարենորոգումների և իրերի ընթացքի սոցիալականացման պատմական տենդինցիա։ Միջոցներ, որոնք հարթում ու դիւրացնում են պրոլետարիատի դասակարգային կռուի պատմական ուղին, նպաստում նրա շատափոյթ առաջխաղացման, յաջող ընթացքին։ Մարքսը հէնց նայն հասցէի մէջ աւելացնում է, որ կօոպերատիւ աշխատանքը, լինելով սահմանափակ և

---

46) Ibid, եր. 27-28.

47) Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. III, եր. 173.

երբեմնակի փոքր սակաւաթիւ բանուորների, չի կարող երբէք մրցել ու յաղթել կապիտալիստական մօնօպօլի դէմ: Կապիտալիստական մենավաճառ շահագործութիւնը կը վերջանայ միայն քաղաքական ոյժի գրաւման, նուաճման միջոցով բանուորների կողմից: Այդ պատճառով է հէնց, որ «Ինտերնացիոնալը» իր ամբողջ գործունէութեամբ և ձգտումներով նուիրած էր բանուոր դասակարգի քաղաքական կազմակերպութեան ու դաստիարակութեան:

«Ջօնեալ հասցէն» («Ինաուգուրալ ադրեսը») շեշտելով քաղաքական ոյժի նուաճման անհրաժեշտութիւնը, յիշատակում է այն փաստը, որ այժմեանից իսկ պրօլետարական դասակարգերը իրանց սեփական տերիտօրիայում քաղաքականապէս կազմակերպուելով, ընթանում են նոյն գիտակից ուղղութեամբ և դէպի նոյն պարզ ու անշեղ նպատակը: Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և Իտալիայում կազմակերպուած բանուորական կուսակցութիւնները գործում են նոյն ոգով և ձգտումներով: «Նրանք պարունակում են իրանց մէջ յաջողութեան մի տարրը—թուերը, թուական մեծութիւնը. սակայն թուերը միայն այն ժամանակ են ունենում ծանրակշիռ նշանակութիւն, երբ նրանք օղակուած են լինում մի ուրոյն միութեան մէջ և ընթանում են դէպի մի գիտակից նպատակ:» Հէնց ինքը «Ինտերնացիոնալը» պէտք է դառնայ այդ շաղկապող, ամուր օղակող միութիւնը բոլոր զատ-զատ ազգային կազմակերպութիւնների: Դրանից պարզ երեւում է, որ «Ինտերնացիոնալի» հիմնադրութեամբ ոչ միայն չեն վերանում բոլոր քաղաքակիրթ երկրների ազգային բանուորական կազմակերպութիւնները, այլ ընդհակառակը նրանք անքակտելի կապերով զուգորդուած են միջազգային հողի վրայ միջազգային կազմակերպութեամբ: Պրօլետարիատի ազգային կազմակերպութիւնը լրացնում, ամբողջացնում է միջազգային կազմակերպութեամբ:

Այնուհետև «Ջօնը» կանգ է առնում պրօլետարիատի արտաքին քաղաքականութեան վրայ: Հէնց նոյն ժամանակամիջոցում տեղի ունեցող երկու արիւնահեղ դէպքերի նկատմամբ «Ինտերնացիոնալի» արտայայտած դիրքը պարզ ապացոյց է, թէ ինչպիսի սկզբունքային վերաբերմունք ունի պրօլետարիատի միջազգային կազմակերպութիւնը դէպի արտաքին այս կամ այն քաղաքական խնդիրն ու երևոյթը: Այդ դէպքերն էին Ամերիկայի քաղաքացիական կռիւը և լեհական ապստամբութիւնը, բանի ճնշումները Կովկասում: «Ինտերնացիոնալի» ձօնը կրակոտ բողոքներ է արձակում ֆէօդալ-բուրժուական կա-

ռավարութիւնների ա.դ բռնակալական ճնշումների դէմ։ «Անդիմադիր ճնշումներն ու յարձակումները այն բարբարոսական ոյժի —ասում է Ջոնը—որի գլուխը նստած է Եռերբուրգ, իսկ ձեռքերը գործում են եւրոպական բոլոր դիւանագիտական կաբինետներում, պարտաւորեցնում են բանուոր դասակարգերին, հետամտելու միջազգային պետական արուեստի խորհրդին, հսկելու կառավարութիւնների դիպլոմատիական խաղերի վրայ, կարևոր դէպքերում նրանց դիմադրելու, իսկ անհնարին դէպքերում միանալու հասարակական ցասմանն ու բողոքին և յայտարարելու բարոյականութեան ու իրաւունքի տարրական օրէնքները, որոնք կանոնաւորում են ինչպէս անհատների յարաբերութիւնները, այնպէս էլ կազմում են ազգերի փոխադարձ առընչութեան ամենաբարձր օրէնքները։ Այդ կարգի արտաքին քաղաքականութեան համար միտող կոիւը կազմում է աշխատաւոր դասակարգերի ազատագրութեան ընդհանուր կռուի մի մասը» 48) (Հոտրգիրը մերն է)։

Ջոնի վերոյիշեալ տողերից պարզ երևում է, որ կազմակերպուած մարտնչող պրոլետարիատը ոչ միայն իր սկզբունքային դիրքն ու վերաբերմունքը պիտի ունենայ դէպի բուրժուական պետութիւնների արտաքին քաղաքականութեան այս կամ այն երևոյթը, այլ և պիտի անպայման բողոքէ ու կռուէ կառավարութիւնների բոլոր բռնակալական ձգտումների ու ճնշումների դէմ, ուղղուած լինեն դրանք ցեղի, ազգի, կրօնի, սեռի թէ դասակարգի դէմ, այդ միևնոյն է։

Միջազգային բանուորական խմբակցութեան «Ջոնեալ Հասցէն» վերջանում է նոյն ժարտական կոչով, ինչպէս տարիներ առաջ «Կոմունիստական Մանիֆեստը»—«Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք»։

Բ. Դշխանեան

(Կը շարունակուի)

---

48) Ibid, եր. 174—175